



## ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՈՒՇՅԱՆ

### Ս Փ Յ Ո Ւ Ռ Ժ Ո Ւ Մ

#### ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՉԸ

«Մենք վստահ ենք, որ համայն հայ  
նավասացյալ ժողովութիւնը պիտի լս  
Մեր ձայնը»:

ՎԱԶԳԵՆ Ա

Մեր երիտասարդ, գործունյա ու մանա-  
վանդ շինարար Հայրապետի սրտառուց կո-  
չեն մեջբերված այս հատվածն է, որ այս  
անգամ մեր խորհրդածության նյութը կդարձ-  
նենք, զայն բարձր նկատողությանը հանձնե-  
լով ո՞չ միայն գաղութիս ընթերցասեր դա-  
սուն, այլև բոլոր անոնց, որոնց հիմասնի մեր  
ձայնը այս ամսագրիս միշտցավ:

Ամենայն Հայոց ազգընտիր Հայրապետը,  
իր երուսաղեմեն մեր գաղութին ուղղած կո-  
չովք, վստահություն կհայտնե, թե իր սրտին  
ամենաշատ խոսող այդ կանչըն՝ պիտի  
շգտնվի հարազատ զավակ մը, որ շանսա:

Ի՞նչ է այդ կոչը, և ի՞նչ՝ հավատացյալ-  
ւերուս անսալիքը:

Կոչը, կոթողակերտ ու պատմական փա-  
ռավոր անցյալովը մեծ նշանակություն ու-  
նեցող և սակայն անզգուցության պարագա-  
յին փլուզումի դատապարտված Ս. Հարու-  
թյան Տաճարի վերանորոգումի հարցին ըն-  
դառաջելն է: Հարց մը, որ ամբողջ քաղա-  
քակիրթ ազգերու ուշադրությունը գրաված է:

Ուրիշ խոսքով, Վեհափառի կոչը, Քրիստո-  
սի Ս. Գերեզմանը և անոր կյանքի վերջին  
հանգրվանին հետ կապ ունեցող սրբատեղի-  
ները իր մեջը պարագրկող հսկա Տաճարը  
(որ 1927-ին, իր նմանը չունեցող երկրաշար-  
ժին հետևանքով վնասներու ենթարկված և  
երեսունվեց տարիներու ընթացքին ընդլայ-  
նած ճեղքերովը փլելու վտանգին դատա-  
պարտված է), աղատելու համար օգնության  
ձեռք մը երկարելու առաջարկն է:

Երուսաղեմով, ու մանավանդ Հայ Երու-  
սալիմով հպարտանալու շատ մը պատճառ-  
ներ ունինք: Անոնք, որոնք գտնված են հոն,  
արդեն զիտեն, թե ի՞նչ կնշանակե Հայ Երու-  
սալիմ, իսկ անոնք, որոնք շեն եղած, կուգան  
ըսելու, թե եթե Մայր Արոռ Ս. Էջմիածինը  
մեր ազգին բարախող սիրան է, Երուսաղեմը՝  
առաջ բռնի է: Ս. Էջմիածնեն վերջ եթե կա  
տեղ մը, որով կրնա հպարտանալ հայրդի  
մը, այդ Հայ Երուսաղեմն է, ո՞չ միայն իր  
պատմական ու նշանակալից հանգամանքին,  
այլև Ս. Էջմիածնի շափ ունեցած հնության

և մանավանդ ազգին մատուցած ծառայության համար:

Առիթը չէ, և ոչ ալ տեղը, այդ ծառայության ծալքերը բանալու: Միայն այսքանը ըստնք, որ Հայ Երուաղեմը, իր ափ մը գզին ըստնք, որ Հայ Երուաղեմը, իր ափ մը գզին կորպում դիմարանություն»-ովը, —ինչպես կոիվորյալ միաբանություն»-ովը, —ինչպես կոիվորյալ լուսահոգի թորգոմ պատրիարքը, գաղթերու փոթորիկներուն ու նախճիրներուն դիմ կուրծք ցցած և նահատակներու շարան մըն ալ տված է, պահել ու պաշտպանելու համար այն սրբատեղիները, ուրկե օր մը Հիսուս անցավ, ապրեցավ, հրաշագործեց, բարողեց, խաչվեցավ, հարյավ և հաղթական երկինք համբարձավ:

Հինգ հարյուր միլիոն կաթոլիկության գրեթե նույնքան մըն ալ օրթոգրքուության համահավասար և տեղ-տեղ քիչ մըն ալ ավելի իրավունքներ ունեցող հինգ միլիոնը շանցնող հայության համար, մեծ պատիվ մըն է, որ ինքնին կուգա փաստելու, թե Ս. էջմիածնեն անմիջապես վերջ մեր հպարտության առարկան Հայ Երուաղեմն է եղած և պիտի շարունակե ըլլալ:

Ասո՞ր համար է, որ մեր Վեհափառ Հայրապետ հանձն առավ անգամ մը ևս ձգել իր գահը և գալ անձամբ նախագահել այն ժողովին, որուն նպատակն է վերականգնել համայն քրիստոնեության և մանավորաբար մեր պարծանքը եղող Քրիստոսի Ս. Հարության Տաճարը, որուն մեջ գտնվող հիսունի մոտ հուշավայրերու մեջ համահավասար իրավունք ունինք մենք, հույնին և լատինին հետ:

Չէ՛ եղած տարի մը, որ Ս. Հարության Տաճարի մեջ մեր ունեցած իրավունքները պաշտպանելու համար, մեր նախահայրերը արյուն թափած և կամ ծեծ կերած ըլլան, ըլլան անոնք բարձրաստիճան՝ վեղարապորներ, ըլլան համե՛ստ միաբաններ կամ աշխատավորներ, Ու այս, տակավին մինչև այսօր, հակառակ անոր, որ քաղաքակրթված դարու մեջ կապրինք և անոր պեսպես շնորհքներու կվայելենք:

Մեր պապերը, գերագնահատելով Հայ Երուաղեմին արժեքը, շատ անգամ քալելո՛վ ուխտի գացած են և անսակարկ պարզած իրենց քսակները, որպեսզի միշտ պլազան Քրիստոսի Ս. Գերեզմանին և Գլւագրի Ավագ Խորանին կանթեղները և իր սփոփարար թաթը երկարե համայն հայության վրա:

Մենք անոնց հարազատ զավակներն ենք ու անոնց ունեցած բարոյական հարստություններուն ժառանգորդները: Եկած է պահը, որ գործնականապես ցուց տանք այդ ժառանգության տերն ու տիրականը ըլլալնիս:

Վեհափառ Հայրապետը գիտակից և խղճամիտ հայորդիներուս սիրտը կրախե, արթընցնելու համար մեր խղճին մեջ նիրջող պապենական այդ ողին և վստահություն կհայտնե, թե աշխարհի վրա պիտի չգտնվի հայորդի մը, որ պիտի շուզե բանալ իր քաշը, ըստ կարելվուն, հասնելու համար սովորողական այն պահանջման, որ Ս. Հարության Տաճարի նորոգությունն է, ինչպես ըսինք, աղատելու համար զայն կանխահաս փլուզում:

Նորին Սրբազնություն պատվիրակ սրբազն հայրը երբ ժամանե, վստահ ենք, որ ավելի ընդարձակ կերպով վերահասու պիտի դարձնե զմեղ այս հարցին առնչությամբ: Մինչ այդ, մենք նախակարապետի դերը ստանձնած, այժմեն կուգանք ըսելու ընդհանրապես մեր ընթերցողներուն և մասնավորապես արժանատիհանայ մերազնեից, որ անսա՛ն Վեհափառ Հայրապետի սրտառու կոշին և այժմեն սկսին պատրաստվիլ լայնորեն աջակցելու այն հանգանակության, որ մեր՝ արժանատիհանայ բաժինը պիտի ըլլա սրբազն այս մեծ գործին մեջ:

Հայ Երուաղեմը փոթորիկներու և արհավիրքներու մեջն անցնելով հասած է մեզի: Այսոր շկան ո՛չ այդ փոթորիկները և ոչ սպառնալիքները, որոնք միլիոններ արժեցին: Հայ Երուաղեմը պետք է կանգուն մնա, ու կանգուն կմնա այն ատեն միայն, երբ ուզենք, —ինչպես միշտ ուզած են մեր նախնիք, — անկեղծությամբ ձեռք երկարել:

Պատրաստենք այդ երկարելիք ձեռքը ու մոտենանք այս հարցին գիտակցարար այնպես, ինչպես մոտեցավ Կյուպենկյան հաստատությունը, իր վրա առնելով ըլլալիք ժամանքին մեկ երրորդ բաժինը:

(Խմբագրական «Հայ կեդրոն»-ի, 1963 դեկտեմբեր, № 12):

